



## ՆԱՐԵԿ ՎՐՈՒ ԾԱՔԱՐՑԱՆ

(Պահանջակ և Գեղարդի վաճրի)

### Ա Մ Ա Ն Ո՛Ռ . . .

Պատմության կամ հավիտենության է համեմուտ ևս մի տարի, հինը, 1969 թվականը: Եթե կա հինը, կա և նորը՝ Ամանորը. 1970 թվականը փաստորեն առաջին՝ հնի շարունակությունն է՝ մեր կանքի շարունակական ճանապարհին, որը մեզ տանում է դեպի մեր լուսավոր վաղը կամ ապագան:

Ամանոր է, ամեն բանի սկիզբը՝ իր առաջին օրով, ժամով ու ժամանակով: Այժմվանց չնյութականացած վաղվա մասին գորշակություններ անելը որքան անհմատ, նույնան և ծիծաղելի է: Այդ մասին կխոսվի վաղը, եթե այն կրտսեա իրականություն. սակայն ապագայի ծրագրերը անպայման պետք է լինեն այսօրվանից՝ մեր խորիրդածություններով հանդերձ:

Ժամանակի և տարածության մեջ Ամանորը ժամանակի տոնն է և, եթե ուզում եք՝ ինքը ժամանակը: Առա թե ինչու ապրող ու շնորհ մարդը Ամանորներ դիմավորելիս տենչացել է միշտ վերանորոգվող իր երազների լույս-իրականացումը ու վառել անշափ կանեթեղներ ու լույսեր թե՛ եկեղեցուց ներս ու թե՛ տոնածառերի կամ ամանորյան սեղանների շուրջ: Խոկ այդ լույսերի գործադեղությունն ու բազմազանությունը խորիրդանշել է մարդկանց երազների տարբերությունը, զգացմունքների պեսպիտությունը:

Հոգեկան մեծ հարստություն է երազելը, պայելի մեծ հարստություն է երազները վերանորոգել կարողանալը: Այն, երազներն ել են հնանում ու կարիք ունենում վերանորոգման: Դա հներնակատարելագործման գգուող անհատի հոգեկան կարևոր հատկանիշներից մեկն է: Դա ճշմարտություն է նաև ընտանիքի, ազգի կամ հասարակության համար: Երազելը և միշտ երազները վերանորոգելով դարձալ երազելը նշանակում է

այսօրվա մեջ տեսնել վաղը, այլ խոսրվ մեր անձուկ գոյության սահմանները անհունորեն ընդարձակել, պայօրվա սահմանափակ ժամանակի մեջ իմաստուն կերպով գալիք ժամանակները «գնելք». «Տեսջիք, — իր խորը ուղղելով նիդեսացիներին ասել է Պողոս առաքալը, — որպէս ճշմարտի գնացեք. մի իբրև անհմատոք, այլ իբրև իմաստունք. գնեցեք զժամանակս» (Եփես. Ե 15): Լավ է ասված. իմաստուն կերպով ժամանակը «գնելք», պայինք արծեքավորել այն:

Հաս առածի՝ ժամանակը ուսի է: Եթե իրոք ոգենեակը ժամանակին նյութականացած արծեքավորում տալ, ապա ճիշտ կիեներ ասել, որ այն անգնահատելի գանձ է: Բայց ինչ էլ որ ասենք և ինչպիսի բնորոշում էլ տանը ժամանակ հասկացողությանը, միշտ այն մնում է որպես կյանքի գաղափար, որպես կյանքի չափանիշ: Ուրեմն ժամանակի շրջանակից դուրս կյանքի մասին մտածելը բոլորովին անհնարին է: Եթե կա ժամանակը, կա' և կյանքը, բայց մեզ պետք է նախ ժամանակը՝ իմաստուն կերպով «գնելքած», ապա՝ կյանքը: Արարիչը իր արարածին կյանքը տալիս է ժամանակի մեջ: Նա այն բորբոք շնորհում է հավասարապես, ժամանակի հավասար հասվածով: Արարածները որ այն «գնում» են անհավասար, և հենց դրանով էլ կյանքի պատմությունը դառնում է տարբեր: Ով կյանքում կապրի լավ, բայսի ամրողչական և խորագույն իմաստով, նրա կյանքը էլ կրտսեա գեղեցիկ ու անգնահատելի, իմաստալից և արծանի պատմություն դառնալու: Այս առումով է, որ իմաստովորվում և բովանդակություն է ստանում ծոլովդրական այն խոռը, թե «կարևոր այն չէ, թե մարդը ինչքան է ապրում, այլ՝ ինչպես»: Կոմիտաս վարդապետն

ինչպես ապրեց, ինչպես ապրեցին մեր պատմության վիթխարի դեմքերը, որոնց սահմանակոր կյանքը նվաճում համբիսացավ ժամանակի ահամանության: Հավիտենականը շահվում է այսպիսի «ինչպես»-ով, կերտվում կոտորակ ժամանակներով. պլազմե ի՞նչ նոր կամ ի՞նչ հին տարի: Տարիները նոր են կամ հին մարդով, երակյանքով: Այս իմաստով է միայն, որ այս աշխարհում ապրող յորաքանչյուր մարդու համար Ամանորը դառնում է հոյս ու հոյզ, ուստի ու աղոթք, քարեմանթություն ու շնորհավորաքը: Նովճ մղումով է դարձավ, որ այսօր Հայաստանում թե այդուրում հայրը, ինչպես նաև աշխարհի բոլոր մարդիկ, միլիոնակոր շնորհավորաքներով, հազար ձեւերով ու հարյուրավոր լեզուներով միմյանց շնորհավորում ու, միմյանց քարի մատյանք անելով, Աստոծն օրինությունն են հայցում, իսկ մեր ու եկեղեցին միշտ Ամանորի առաջին օրը ու պատարագով է սկսում իր կյանքը, որպեսի «Օրինեցի և պահպանեցի... Հայրապետութիւն և հանրապետութիւն հայց... Օրինեցի և պահպանեցի երկիրս, անդատան և պատարերութիւն տարույ... վաճքս, անապատս, քաղաքս, և գիշու...»:

Սովորություն է ասել՝ ժամանակակոր կամ անցավոր կյանք, այսպես է երկրի ասովածիդի օրենքը: Քրիստոն էլ այս երկրի վոր երկար չմնաց: Սակայն մեր Փրկիչը երբ աշխարհ եկավ, մեզ անցավորից քացից ցոյց տվեց նաև հավիտենականի հոյսն ու գաղափարը՝ երկնայինը: Քրիստոնին հավատացողներն են, որ արժանի են երան, երա բերանով ավետարանված մշտնշենավոր կյանքին, հանդերձալ կյանքին: Այսուեղ, մեր այս երկրային և ժամանակակոր կյանքում, այսպիսի առաքինի և հիմաստավորված մի կյանք պետք է վարելու, որ նրանով արդարան մեր հոգին, որպեսի զերծ լինենք կորույտան մշտաբորքը սարսափներից և տիրանանք խոստացված երկնային անանց կյանքին: Ուստի այսօր, երբ վերանորոգիք Ամանորը եկել է մեզ հուշելու ժամանակի և հավիտենականության գաղափարը, ինչու չարծարծել մեր հոգիների մեջ մեզ ի վերուստ տրված աստվածային կրակը, ինչու չափրել ավետարանական կյանքով՝ որպես հավատացալներ, և դողալ մահվան սև որվականից, ինչու չափրել, չաղոթել, չստեղծագործել այնան, ինչպես արել են մեր քարի և հիմաստում նախնիք՝ մեզ պահն թողնելով ոչ միայն հենց նոյն Ավետարան ու երա հոգին, այլև իրենց առաքինի կյանքով հարստացնելով մեր պատմությունը և ապրությունը մարդու կյանքը:

Կյանքը հոր է ժամանակի և տարածության մեջ: Պետք է հոսանքի դեմ լողալ իմանալ՝ կուլ չգնալու համար ժամանակին: «Ու է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցի»: Մարդ արարածը ի բնել ենթակա է տկարություններ կամ սպասարկումներ ունենալու իր կյանքում: Սակայն որպես բնական էակ, որպես աստվածութեն կերտվածք, նա ունի իր անկապեկի զենքը՝ հոսանքը դիմագրավելու և դեպի անկում ջնալու: Դա մարդու հոգեկան կորով է, հավատքով ամեն բան հաղթելու կամքը, երա շանասիրությունը, համբերությունը, միտքը: Այս ստորոգելիները ոչ միայն հավիտենականի հախապայմանն են, այլև նրանցով գրահավորված կյանքը հենց այստեղ է՝ երկրի վրա: Ուրեմն գեղեցիկ և անվանան կյանքի համար ամանորյան խորհրդանություններով միշտ իմաստավորի կյանքը երկրի վրա և որպես քիչոտնայա մարդ գգտիր հավիտենականին, ըրովհետև ինչպես շատ գեղեցիկ կերպով ասել է մեր Վեհափառ Հայրապետը իր զատկական խորհմաստ քարոզներից մեջ՝ «առանձին կյանքը ապրելու հոյսին, մարդ կմեռնի մասն իսկ առաջ» (1958 թ. ապրիլի 6):

Սհմանը առջև 1970 նոր թվականը և նոր տարին՝ դեռ չտրորված ու չնվաճված: Տրոյնենք և նվաճենք այն մեր անձին, ազգին ժողովրին, եկեղեցներ, հայրենիքին և համայն մարդկությանը ընծայաբերած մետքի ու ձեռքի գործերով՝ միշտ հիշելով, ու մեր մարդկային կոչումն իսկ է ծառայի մարդկության բարօրության ու առաջարկության ու աշխատի խաղաղության ու ուրաքանչիրությունը, քանի որ մարդիկ ու տարբեր են, բայց մարդկությունը՝ նոյն Այն՝ «գենել» ժամանակը և, ինչո՞ւ չէ, դրդուած ժամանակի ամեն մի վայրկյանի վրա 1970 թվականի օրացուցի ամեն մի նոր թերթիկը պոլեկուվ իմանանք հաշվել այդ ուրերք, որովհետև օրեր հաշվելը ըստ սովորական հիմաստության, սրտի հիմաստություն և անհրաժեշտություն մարդու կյանքում:

Բարի գալուստ գեղեցիկ Ամանորին քարի երթ երան, և յոդ մեզանից յուրաքանչյուր առանձին-առանձին ասի՝ «Ծննդանակը իմ հարատությունն է, ժամանակի մի վարեկանողը»:

Ծննդանակը բոլորի նոր տարին: